



Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

ԱՐԵՏԱՐԵՐ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔ.

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՔ

ՎԻՃԱԿԻՍ ՀԱՅՈՅ ՆԱԽԻՉԵԻԱՆԻ ԵՒ ՊԵՍԱՐԱՊԻՈՅ

ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՔ.



արտի 7. — Ա. Էջմիածնի Սիւնիո-
դոսին հրովարտականը, որ գը-
րուած է ի փետրուարի տարւոյս,
ընդ համարաւ 124, ըստ առա-
ջարկութեան Կատարինասլաւի
պալատան՝ ընդունուեցան իշարս
եկեղեցականաց Վիճակիս Յակոբ Մե-
նիքեանց եւ Ներսէս Պարտախճեանց,
որք արդէն արձակուած էին ի հասարակու-
թեանց Նախիջեւանի եւ Թօպաի գեղջ:

— Նախիջեւանի Հոգեւորական Կառավարու-
թեան առաջարկութեամբք եւ սուրբ Լուսաւորիչ
մայր եկեղեցոյն բարեպաշտ ժողովրդականաց

խնդրագրովք՝ վերստին հաստատուեցաւ իւր պաշ-
տօնին մէջ, նոյն եկեղեցոյ երէցփոխան՝ Տոհմա-
կան Պատուամեծար Քաղաքացի մեծարոյ Գէորգ
Աղայն Խաթրանեան՝ այլ եւս երեք տարի միջո-
ցաւ, եւ իւր արդիւնաւոր եւ ջերմեռանդ ծա-
ռայութեանը համար ընդունեցաւ Առաջնորդա-
կան Ատենիս շնորհակալութիւնը:

— Թէոդոսիոյ Հրեշտակապետաց եկեղեցոյն
ուրարակիր դպիր Պետրոս ձէնանեանց, նշանա-
կուեցաւ դպիր Հին Խրիմու սուրբ Աստուածա-
ծնայ եկեղեցոյն, եւ օգնական մանկավարժի նոյն
ատելի ժողովրդական դպրոցին:

Մարտի 14. — Սուրբ Էջմիածնի Սիւնիոդոսին հրամանաւը, որ իփետրուարի տարւոյս ընդ թուահամարաւս 136, քահանայորդի Մկրտիչն Տէր-Գէորգեան Սաղունեանց Նախիջեւանցի, ըստ իւր խնդրանացը արձակեցաւ յեկեղեցական կոչմանէ, որով ազատ է այսուհետեւ ընտրել իրեն համար այլ եղանակ կենաց :

— Հաւաստի լուր հասաւ վերստին յԱռաջնորդական Ատենաս զանազան տեղերէ թէ այս մօտերս՝ ինչպէս ուրիշ վիճակներու մէջ, նմանապէս եւ այս Նախիջեւանի եւ Պեսարապիոյ վիճակիս հայաքնակ քաղաքները կշրջին օտարական անծանօթ անձինք, իրենք զիրենք հայ քահանայ անուանելով : Յայտնի է Առաջնորդական Ատենիս թէ սոքա ընդհանրապէս Պարսկաստանի կողմերէն եկած Սալմաստեցի եւ Խոյեցի խաբէբանք են, զորս Հայաստանի եւ Վրաստանի Հայկազունք լաւ կճանաչեն, եւ սովորաբար կը զգուշանան ինոցանէ իբրեւ յանուանի գողոց եւ իխաբեբայից : Ինոցանէ ոմանք հայերէն անգամ չգիտեն խօսիլ, բայց մեր պարզամիտ ժողովրդոց կհաւատացնեն թէ հայ քահանայ են . միայն իբր թէ պարսկահայ լինելով՝ իրենց լեզուն կորուսած են, բայց Լուսաւորչական դաւանութեան մէջ հաստատ մնացած : Այս խաբէբանքերը երբ Հայոց մէջ կշրջին՝ հայ կանուանեն զիրենք, իսկ երբոր Հոռոմներու կամ Ռուսաց մէջ՝ յունադաւան (*կոեֆ*) : Ոչ եպիսկոպոսէ մը ձեռուրնին վկայագիր ունին, ոչ սրբոյ Էջմիածնի Սիւնիոդոսէն եւ ոչ վիճակային Ատենէն : Սովորաբար իրենք մեծ ընկերութիւն են, բայց ասդիս անդին կշրջին ցրուած : Մէկ քանին երեւեցան այս տարիներս նաեւ Տաւրիկեան գաւառիս քաղաքները, բայց շուտով իմացուեցաւ նոցա խաբէբայութիւնն ու աւազակ մարդիկ լինելը, եւ աքսորուեցան, թէպէտեւ արդէն մեր բարեմիտ ժողովրդոց զբաւմներէն բաւական փող քաշած էին :

Խոյեցւոց օրինակին հետեւելով՝ այս տարիներս սկսան Ռուսաստան գալ մուրողութեամբ նաեւ շատ Մշեցիներ, որոց մէջ գտնուեցան նաեւ սուտ կամ ճշմարիտ քահանաներ, բայց նոյնպէս առանց օրինաւոր անցագիր (*փաշիոտթ*) եւ հրամանագիր ունենալով :

Սոցա կարգէն կերելի այն քահանայ անուանեալ՝ բայց Առաջնորդական Ատենիս դեռ անյայտ Պողոսը, որ բաւական փող հաւաքեւ է ի Նախիջեւան եւ ուրիշ քաղաքներ : Նմանապէս մէկ ուրիշը, որ մինչեւ Փեթրպուրկ հասեր է՝ նոյնպէս առանց անցագրոյ եւ հրամանագրի, եւ առ ժամանակ մի կարողացեր է խաբել տեղւոյն եկեղեցականներն ու աշխարհականները :

Առաջնորդական Ատենաս գիտնալով իրեն պարտքը, որով պէտք է արթուն կենայ այսպիսի անկարգութեանց դէմ, եւ կանոնական ու կայսերական օրինաց ճիշդ պահպանութեանը նա-

խանձախնդիր լինի, ահա դարձեալ շրջաբերական հրամանագրով իմացուց եւ պատուիրեց բոլոր Հոգեւոր Կառավարութեանց եւ քահանայից վիճակիս, որ ո՛ւր տեղ որ երեւին այնպիսի կասկածաւոր մարդիկ՝ Առաջնորդական Ատենէս վաւերական վկայագիր չունենալով իրենց ձեռքը, չընդունուին բնաւ իբրեւ քահանայ կամ վարդապետ կամ տիրացու, եւ հրաման չունենան ժողովարարութիւն ընելու եկեղեցեաց մէջ : Իսկ թէ փողոցները կամ տները շրջին մուրացիկ աղքատի նման, այդ կողմանէ իհարկէ քաղաքական իշխանութիւնը կհսկէ նոցա վրայ ըստ օրինաց :

ՔԱՂՈՒԱՅ ԶՐԱԳՐՈՒԹԵՆՆԷ 1859 ԱՄԻՆ.

Փետրուարի 5. — Կերչ քաղաքի Աղօթատան երէցփոխան Կարապետ Խարաճայեանց՝ իւր պաշտօնը երեք տարի ջերմեռանդութեամբ կատարելէն յետոյ՝ իւր խնդրանօքը արձակուեցաւ պաշտօնէն՝ ընդունելով Առաջնորդական Ատենիս շրջնորհակալութիւնը, եւ նորա տեղը նշանակուեցաւ ժողովրդոց միակամ խորհրդովը մեծարոյ վաճառական Գաբրիէլ Մանուկեան Փեշեքերեանց : —

Արդէն Անափայի Հայոց եկեղեցւոյն խաչկալը եւ ուրիշ քանի մը զարդերը Նախիջեւան տարուած էին՝ երբ վերջի պատերազմին ժամանակը այն եկեղեցին քանդուեցաւ . այն զարդերը Կերչ բերուեցան հրամանաւ Գեր. Առաջնորդին, եւ Աղօթատունը դրուեցան :

Փետրուարի 16 — Նշան քահանայն Տէր-Նշանեանց օրինաւոր վկայագրով եւ ուրիշ հարկաւոր թղթերով ծամանեան երկրէն Խրիմ եկած լինելով՝ ընդունեցաւ Ռուսաց տէրութեան հպատակութիւնը, եւ վիճակիս Առաջնորդին հրամանաւը նշանակուեցաւ Պեսարապիոյ Հօթին քաղաքին եւ մերձակայ գիւղօրէիցը քահանայագործող :

Մարտի 16. — Ագքիրման քաղաքին Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն երէցփոխան Կարապետ դպիրն Աւագեանց՝ իւր պաշտօնին պայմանեալ ժամանակը գովութեամբ լրացրնելէն յետոյ, ընդունեցաւ Առաջնորդական Ատենիս շնորհակալութիւնը, եւ վերստին հաստատուեցաւ նոյն պաշտօնին մէջ այլ եւս երեք տարի ժամանակաւ :

— Ս. Էջմիածնի Սիւնիոդոսին հրամանաւ, որ ի23 յունուարի ընդ համարաւս 53, քահանայորդին Ստեփանոս Տէր-Յակոբեան Աւագեանց արձակուեցաւ յեկեղեցական վիճակէ :

Մարտի 20. — Առաջնորդական Ատենաս ընդունելով Նախիջեւանի Նեսվիթայ գիւղին ժողովրդեան խնդիրը, կրկին անգամ հաստատեց երէցփոխանութեան պաշտօնին մէջ՝ գեղին սուրբ Կարապետ եկեղեցւոյն երէցփոխան Անտոն Պետրոսի :

սեանը, յայտնելով ընդ նմին եւ Առաջնորդական Ատենիս շնորհակալութիւնը նորա ջերմեռանդ եւ հաւատարիմ սպասահարկութեանը համար:

Մարտի 23. — Քանի մի հարկաւոր պատճառներով Սիմֆերոփոյի, Օրպազարի, Հին Խրիմու եւ Խարասուպազարի քաջանայք, Տէր Երեմիա Մելքիսեդեկեան, Տէր Գէորգ ձէնանեան, Տէր Յովհաննէս Մանտրաճեան եւ Տէր Պետրոս Էմիրճեան, տեղափոխեցան առ ժամանակ մի հետագայ կարգաւ. առաջինը փոխադրեցաւ յեւպատորիա, երկրորդը Սիմֆերոփոյ, երրորդը Օրպազար եւ չորրորդը Հին Խրիմ:

— Ս. Էջմիածնի Սիւնհոգոսին՝ հրամանագրաւոր որ յ30 յունուարի ընդ համարաւ 97, կպատուիրէ Առաջնորդական Ատենից որ սաստիկ մտադրութեամբ հասու լինին երէցփոխանաց յայտարարական գրերուն ու հաշիւներուն՝ որ կունենան եկեղեցեաց նորոգութեան, եւ այլ կարեւոր ծախքերու համար, եւ ըստ այնմ տան կամ չտան նոցա իրաւունք եկեղեցական գումարներէն ծախել աւելի քան զերեք հարիւր ռուպ. եւ եթէ ստիպողական դէպք մը լինի աւելի ծախք ընելու՝ Առաջնորդական Ատենայ պարտաւորին հրաման խնդրել Սիւնհոգոսէն: Առաջնորդական Ատենայ արդէն Թոյլ տուած է երէցփոխանաց հարկաւոր ծախս ընել տարին մի անգամ մինչեւ 30 ռուպլի չափ. իսկ եթէ հարկ լինի աւելի, մինչեւ 9300, հրաման խնդրել վիճակային Ատենէն. սակայն ոմանք ուղիղ չիմանալով այն հրամանին միտքը, փոխանակ մէկ անգամ միայն ծախք ընելու առանց մասնաւոր հրամանի մինչեւ 30 ռուպլի, սովորութիւն ըրեր էին ամէն մէկ անգամուն, ամէն բանի, կամ Թէ ամէն ամիս, 30 ռուպլի ծախք ընել. որով բոլորին գումարը 300 էն շատ աւելի կլինէր, որ միանգամայն Առաջնորդական Ատենին ունեցած իրաւունքէն եւս դուրս բան է:

Վասն որոյ Առաջնորդական Ատենայ ընդհանուր շրջաբերական հրամանաւ՝ որ ի20 Ապրիլի՝ սաստիկ պատուիրեց Հոգեւոր Կառավարութեանց եւ Տաւրիկեան գաւառիս քաջանայից ձեռքով բոլոր երէցփոխանաց եկեղեցեաց վիճակիս, եւս եւ առանձին հրամանագրովք առ նոսա, Թէ

Նախ՝ երէցփոխանք իրաւունք ունին եկեղեցական փողերէն գործածելու մէկ անգամ 25 ռուպլիէն մինչեւ 30 ռուպլի կարեւոր պիտոյից համար. բայց առ մի նուազ խօսքը իմանան մեկ անգամ, եւ ոչ Թէ շատ անգամ եւ կամ տարւոյն ամէն ամսոցը մէջ:

Երկրորդ, տարեկան ծախքերէն աւելցած եկամուտը հասցընեն ժապաւինեալ մատենից հետ իմիասին յԱռաջնորդական Ատենայ՝ յարժանին անօրէնութիւն:

Երրորդ, եթէ դէպ լինի նոյն գումարը, կամ աւելի եւ կամ պակաս, ծախք ընել եկեղեցւոյ նորոգութեանը՝ կարկատանաց եւ այլ կարեւոր պի-

տոյից համար, կպարտաւորին առաջարկել Ատենին ժողովրդոց վկայագիրը, եւ եթէ հարկ լինի՝ նաեւ ճարտարապետին տուած գծագիրը եւ ծախուց չափը, որպէս զի ըստ այնմ տնօրինէ Ատենան:

Չորրորդ, առանց Ատենիս հրամանին չպահեն իրենց մօտ տարեկան յաւելեալ գումարը, եւ չըտան ինքնակամ ո՛ւմ եւ իցէ եւ որպիսի եւ իցէ շահով՝ հակառակ կայսերական օրինաց, ըստ որում միայն վիճակաւոր Առաջնորդաց տրուած է այդ իրաւունքը, այսինքն յանձնել գումարը ո՛ւմ եւ իցէ իշահեցողութիւն օրինաւոր գրաւականով:

Մարտի 27. — Նախիջեւանի սուրբ Թէոդորոս եկեղեցւոյն երէցփոխան մեծարոյ Թադէոս Աղայն Քէօլէշահինեան՝ երէցփոխանական պարտաւորութիւնը երեք տարի կատարելէն յետոյ, երկրորդ անգամ ընտրուեցաւ ի ժողովրդոց նոյն պաշտօնին, ընդունելով հաստատութեանը հետ ի միասին եւ Առաջնորդական Ատենիս շնորհակալութիւնը, իրեն երեք տարուան մէջ ցուցուցած ջերմեռանդ եւ հաւատարիմ ծառայութեանը համար:

Ապրիլի 27. — Նախիջեւանի Թօպտի գիւղի եկեղեցւոյն երէցփոխան Գաբրիէլ Յովակիմեանը, երեք տարուան պայմանեալ միջոցին ջերմեռանդութեամբ եւ արդիւնաւորութեամբ կատարելով իրեն յանձնուած աստուածահաճոյ ծառայութիւնը, արձակուեցաւ պաշտօնէն՝ հանդերձ շնորհակալութեամբ Առաջնորդական Ատենիս, եւ նորա տեղը նշանակուեցաւ նոյն գիւղի հասարակութենէն որոշուած Աստուածատուր Յովակիմեան:

Ապրիլի 30. — Քիշնեւի սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն երէցփոխան մեծարոյ Ստեփաննոսը Մածուկեան, որ ուժ տարիէ հետէ կծառայէր այն եկեղեցւոյն ամենայն ջերմեռանդութեամբ եւ հաւատարմութեամբ, ըստ խնդրոյ իւրում արձակուեցաւ պաշտօնէն՝ ընդունելով Պեսարապիոյ Հոգեւոր Կառավարութենէն գովութեան վկայագիր, եւ Առաջնորդական Ատենէս շնորհակալութիւն. իսկ նորա տեղը նշանակուեցաւ տեղւոյն բնակիչ Մարտիրոս Սարգսեան:

Մայիսի 11. — Նողայսք (Ապիթօշնա) քաղաքին հասարակութեանը խնդրագրոյն համեմատ՝ Գեր. Տեղակալն Առաջնորդութեան վիճակիս գովելով նոցա ուսումնասիրական փափաքը, հրաման տուաւ որ ժողովրդական դպրոց բանան նոյն տեղի եկեղեցական տանը մէջ, զոր յանձն առին իւրեանց ծախիւքը նորոգել, եւ դպրոցին ամենայն ծախքը հոգալ: Գեր. Առաջնորդը նշանակեց այն նորահաստատ ուսումնարանին նաեւ մանկավարժ մը՝ աւանդելով նորա ձեռքը ամէն տեսակ պիտանի կանոններ ու բարեկարգութեան ձեւեր՝ ինչ որ արդէն տուած էր վիճակիս ուրիշ ժողովրդական դպրոցներուն: